ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- -------- 2024 թվականի №----Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի մարտի 1-ի №61-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում)՝

ա. 1-ին կետով փոփոխություններ են կատարվել Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №519-Ն որոշման 1-ին ու 3-րդ կետերով սահմանված՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման մասին ու կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրերի օրինակելի ձևերում (այսուհետ՝ Օրինակելի ձևեր), որոնց համաձայն՝ սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման վճարների վճարման համար սահմանված 24 - ամսյա ժամկետը փոխարինվել է տասնօրյա ժամկետով, և սահմանվել է, որ օրինակելի ձևերին համապատասխան կնքված պայմանագրերը (այսուհետ՝ Պայմանագիր կամ Պայմանագրեր) բաշխողի կողմից միակողմանի լուծվում են դիմող անձի կամ կառուցապատողի կողմից միացման վճարը կամ կանխավճարը սահմանված ժամկետում չվճարելու կամ այն հետ պահանջելու դեպքերում, ընդ որում Պայմանագիրը համարվում է լուծված համապատասխանաբար միացման վճարի կամ կանխավճարի վճարման ժամկետի ավարտի կամ այն հետ պահանջելու օրվան հաջորդող օրը,

բ. 2-րդ կետով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) հանձնարարվել է Որոշման ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում՝ մինչև 2023 թվականի մայիսի 8-ը, ապահովել Որոշմամբ կատարված փոփոխությունների մասին արդեն իսկ կնքված Պայմանագրերի կողմ հանդիսացող այն սպառողների և դիմող անձանց պատշաճ ծանուցումը (Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ)) իմաստով), ովքեր Որոշման ուժի մեջ մտնելու պահին ամբողջությամբ չեն վճարել միացման համար անհրաժեշտ կանխավճարը կամ միացման վճարը: Ընդ որում, նշված ժամկետը Հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 21-ի №204-Ն որոշմամբ Ընկերության դիմումի հիման վրա երկարաձգվել է մինչև 2023 թվականի օգոստոսի 8-ը,

գ. 3-րդ կետով սահմանվել է, որ Որոշման 1-ին կետը Որոշման 2-րդ կետում նշված սպառողների և դիմող անձանց համար ուժի մեջ է մտնում և Որոշման 1-ին կետով փոփոխվող ժամկետի հաշվարկի սկիզբը հաշվարկվում է վերջիններիս՝ Որոշման 2-րդ կետում նշված պատշաճ ծանուցմանը հաջորդող օրվանից,

2) Հանձնաժողով մուտքագրված մի շարք դիմում-բողոքների քննարկման արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում Ընկերությունը չի ապահովել Որոշման 2-րդ կետի պահանջը, ինչը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2023 թվականի նոյեմբերի 2-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2023 թվականի նոյեմբերի 2-ի №ՍԱ/34.3-Ղ4-2/4121-2023 գրությամբ: Նույն գրությամբ Ընկերությունից պահանջվել է ներկայացնել Որոշմամբ կատարված փոփոխությունների հիմքով լուծված Պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը (այսուհետ՝ Տեղեկատվություն),

3) հարուցված վարչական վարույթը, հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 2-ի №32-Ա որոշմամբ երկարաձգվել է մեկ ամսով, ինչի մասին Ընկերությունը ծանուցվել է հանձնաժողովի նույն օրվա №ԱՍ/34.3-Մ2-13/417-2024 գրությամբ,

4) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2023 թվականի նոյեմբերի 23-ի №Ե-1849-23, №Ե-1850-23, 2023 թվականի դեկտեմբերի 18-ի №Ե-2019-23 և 2024 թվականի փետրվարի 20-ի №04-ԿՀ-09/260 գրություններով, ըստ էության, հայտնել է, որ իր գնահատմամբ ապահովել է Որոշման 2-րդ կետի պահանջը, հաշվի առնելով, որ ԷԲՑ կանոններով նախատեսված են միայն ծանուցման եղանակները, սակայն որևէ անդրադարձ չկա այն մասին, թե որ հասցեով պետք է ուղարկվեն նամականիները, ուստի Ընկերությունը, ազատ լինելով ծանուցման հասցեի ընտրության հարցում, համապատասխան նամականիներն ուղարկել է Պայմանագրերում նշված միացման հասցեներով՝ որպես իրեն հայտնի վերջին հասցե: Ընկերությունը, մեջբերելով «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի ու Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներ, պնդել է, որ 140 սպառողներ Որոշմամբ կատարված փոփոխությունների մասին ծանուցվել են, որ փաստն ապացուցվում է հետադարձ ծանուցման թերթիկներով և դրանցում առկա անձանց ստորագրությամբ ու ամիս, ամսաթվի նշումով: Ընկերության կողմից նաև ներկայացվել է Տեղեկատվությունը, «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրամադրված՝ որոշ նամականիների ստացման ծանուցագրեր, ռեեստրներից քաղվածքներ, ինչպես նաև որոշ դիմող անձանց կողմից ստորագրված գրություններ՝ վերջիններիս կողմից նամականին ստացված լինելու վերաբերյալ,

5) ԷԲՑ կանոնների 5-րդ կետի համաձայն՝ շուկայի մասնակիցների միջև տեղեկությունների փոխանակումն ու փաստաթղթերի հանձնումն իրականացվում է պատշաճ ձևով,

6) ԷԲՑ կանոնների 6-րդ կետի համաձայն՝ տեղեկությունների փոխանակումն ու փաստաթղթերի հանձնումը համարվում է պատշաճ ձևով իրականացված, եթե դրանք հանձնվել են ստորագրությամբ առձեռն հանձնելու, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով (թղթակցությունը ստացողի մոտ նման համակարգի առկայության դեպքում), պատվիրված փոստով, (այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ), էլեկտրոնային փոստի (այդ թվում՝ սպառողի կողմից նշված էլեկտրոնային փոստի միջոցով) կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցներով (այդ թվում՝ սպառողի կողմից նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով), որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից թղթակցությունը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված

լինելու փաստը, եթե շուկայի կանոններով տեղեկացման կամ փաստաթղթերի հանձնման այլ ձև նախատեսված չէ,

7) ԷԲՑ կանոնների 8-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ հասցեատերը հրաժարվում է փոստային առաքմամբ ուղարկված թղթակցությունն ստանալուց կամ թղթակցության ստացումը հավաստող փաստաթուղթը ստորագրելուց, կամ որևէ պատճառով պատվիրված նամակով ուղարկված թղթակցությունը վերադարձվում է, ապա թղթակցությունը համարվում է հասցեատիրոջը պատշաճ հանձնված ուղարկողի կողմից http://www.azdarar.am հասցեում և իր պաշտոնական կայքում հասցեատիրոջը հասցեագրված թղթակցության առկայության և դրա բովանդակությանը ծանոթանալու հնարավորության վերաբերյալ հայտարարություններից վերջինը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ օրը,

8) Օրինակելի ձևերում «կողմերի վավերապայմանները» գլուխներում առկա է պարտադիր լրացման ենթակա «ծանուցման հասցե» տող,

9) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետով սահմանված պահանջը՝ չի ապահովել Որոշմամբ մատնանշված բոլոր սպառողների ու դիմող անձանց պատշաճ ծանուցումը: Մասնավորապես, Ընկերությունը համապատասխան ծանուցումներն անձանց կողմից մատնանշված ծանուցման հասցեներով ուղարկելու փոխարեն, դրանք ուղարկել է նոր միացվող սպառման համակարգերի տեղակայման հասցեներով, չստանալով հետադարձ ծանուցման անդորրագրերը՝ դրանք տեղադրել է azdarar.am և իր պաշտոնական կայքերում, դրանով Որոշման 2-րդ կետի պահանջը համարելով կատարված, և միացման վճարը կամ կանխավճարը նման եղանակով «ծանուցված համարվելու» պահից տասնօրյա ժամկետում չվճարելու հիմքով Պայմանագրերը համարել է լուծված: Նշվածն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների (դիմող անձանց) իրավունքների և օրինական շահերի խախտման:

Ինչ վերաբերում է Ընկերության ներկայացրած պատճառաբանություններին, ապա դրանք հիմնավորված չեն և չեն կարող հիմք հանդիսանալ նշված խախտման համար վերջինիս պատասխանատվության չենթարկելու համար: Մասնավորապես, ինչպես արդեն նշվել է, ԷԲՑ կանոնների 5-րդ և 6-րդ կետերը սահմանում են շուկայի մասնակիցների միջև պատշաճ ձևով տեղեկությունների փոխանակման ու փաստաթղթերի հանձնման եղանակները, իսկ նշված եղանակով ծանուցման հասցեի հարցը կանոնակարգված (մասնավորեցված) է Պայմանագրերում, որտեղ «Կողմերի

վավերապայմանները» գլխում նշված է պարտադիր լրացման ենթակա «ծանուցման հասցե» տողը: Նշվածից բխում է, որ ցանկացած ծանուցում, նախատեսված թե՛ Պայմանագրերով, թե՛ ԷԲՑ կանոններով, պետք է իրականացվի Պայմանագրերում նշված ծանուցման հասցեներով, ինչով պայմանավորված Պայմանագրի առարկայում նշված նոր կառուցվող կամ վերակառուցվող սպառման համակարգի հասցեով Ընկերության կողմից ծանուցում իրականացնելը, ապա չստանալով հետադարձ ծանուցման անդորրագրերը՝ դրանք azdarar.am և իր պաշտոնական կայքերում տեղադրելը չի կարող համարվել պատշաճ ծանուցում: Ինչ վերաբերում է ԷԲՑ կանոնների 6-րդ կետի իրավական մեկնաբանությանը՝ ԷԲՑ կանոնների 7-րդ կետի համատեքստում, և այդ հիմքով Ընկերության կողմից տեղեկություններն իրեն հայտնի վերջին հասցեով ուղարկելու առնչությամբ եզրահանգմանը, ապա ԷԲՑ կանոնների 6-րդ կետով, ինչպես արդեն նշվել է, սահմանված են ծանուցման ձևերը, իսկ 7-րդ կետով նախատեսված են հասցեի փոփոխությունների մասին բաշխողին տեղեկացնելու սպառողի պարտավորությունը և չտեղեկացնելու դեպքում բացասական հետևանքները, ինչով պայմանավորված էլ հիշյալ կարգավորումը տվյալ դեպքում կիրառելի չէ: Նշված հիմնավորումների համատեքստում առարկայազուրկ է նաև սպառողի (դիմող անձի) մեկից ավելի հասցեների վերաբերյալ տեղեկատվության առկայության պարագայում ծանուցման հասցեի ընտրության հարցում նախապատվություն կիրառելու վերաբերյալ դիտարկումը:

Միաժամանակ, հարկ է փաստել, որ տվյալ դեպքում կիրառելի չէ նաև Ընկերության կողմից մատնանշված դատական գործով կայացված Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը, քանզի այդ գործի և սույն վարչական վարույթի շրջանակում քննվող գործի փաստական հանգամանքները չեն նույնանում. դատական գործի շրջանակում քննության առարկան եղել է ոչ թե սխալ, այլ ճիշտ հասցեով ուղարկված ծանուցման փաստի ապացուցման հարցը: Ավելին, մեկ այլ՝ մասնավորապես №ԿԴ3/0481/02/19 դատական գործով (ընդ որում, ըստ Ընկերության հայցի ընդդեմ Մելիք Գևորգյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին), երբ հասցեատիրոջ կողմից վիճարկվել է իր ծանուցված լինելու փաստը, 2022 թվականի սեպտեմբերի 30-ին կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այնպիսի պայմաններում, երբ ծանուցման հասցեն պատշաճ չէ, ծանուցումները ստացված լինելու վերաբերյալ դատողությունները (առ այն, որ ստորադաս դատարանը ստանալով հետծանուցման հավաստագրերը և չունենալով որևէ պարտականություն ստուգելու, թե ում ստորագրությունն է ծանուցագրի վրա, համարել է, որ պատասխանողը պատշաճ

ծանուցված է) որևէ նշանակություն չունեն ծանուցումը պատշաճ համարելու տեսանկյունից, քանի որ արդեն իսկ առկա է դատարանի կողմից թույլ տրված՝ ծանուցումը ոչ պատշաճ հասցեով կատարելու խախտումը, ինչն էլ Վճռաբեկ դատարանի կողմից դիտարկվել է որպես անձի ոչ պատշաճ ծանուցում, և

հիմք ընդունելով ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետով սահմանված պահանջի խախտման համար Ընկերությանը տուգանել 10 000 000 (տասը միլիոն) դրամ գումարի չափով:

2. Սահմանել, որ այն դեպքերում, երբ՝

1) Որոշման վերաբերյալ ծանուցումն Ընկերությունն ուղարկել է միայն Պայմանագրում նշված սպառողի (դիմող անձի)՝ նոր միացվող սպառման համակարգի տեղակայման հասցեով, չստանալով հետադարձ ծանուցման անդորրագիրը՝ ծանուցումը տեղադրել է azdarar.am ու իր պաշտոնական կայքերում, ապա նման սպառողը (դիմող անձը) չի համարվում Որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունների մասին պատշաճ ծանուցված, և վերջինիս հետ կնքված Պայմանագիրը՝ միացման վճարը կամ կանխավճարը նշված կայքերում ծանուցման տեղադրման պահից տասնօրյա ժամկետում չվճարելու հիմքով լուծված չի համարվում,

2) Որոշման վերաբերյալ ծանուցումն Ընկերությունն ուղարկել է միայն Պայմանագրում նշված սպառողի (դիմող անձի)՝ նոր միացվող սպառման համակարգի տեղակայման հասցեով և ստացել է ստորագրությամբ ծանուցման մասին անդորրագիր, սակայն սպառողի (դիմող անձի) կողմից իր հետ Պայմանագրի կնքման պահից 24 ամսվա ընթացքում վիճարկվում է նշված ծանուցումն իր կողմից ստացված լինելու փաստը, ապա նման սպառողը (դիմող անձը) չի համարվում Որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունների մասին պատշաճ ծանուցված, և վերջինիս հետ կնքված Պայմանագիրը՝ միացման վճարը կամ կանխավճարը նման կերպ ծանուցման պահից տասնօրյա ժամկետում չվճարելու հիմքով լուծված չի համարվում:

3. Պարտավորեցնել Ընկերությանը սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

2) երկշաբաթյա ժամկետում ապահովել Որոշման 2-րդ կետի կատարումը՝ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված սպառողների (դիմող անձանց) մասով, և այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը՝ բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

5. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--փետրվարի 2024թ.